

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան վեր 10 բուր, կես տարվան 6 բուր:
 Առանձին համարները 5 կոպեկով:
 Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:
 Գտարարարարացիք սխում են ուղղակի
 Тифлис. Редакция «Мшакъ»

Խմբագրատանը բաց է առաօտեսն 10—2 ժամ
 (Բացի կիրակի եւ տոն օրերից)
 Յայտարարութիւնը բնութեամբ է ամեն լիզուով:
 Յայտարարութիւնների համար վճարում են
 իւրաքանչիւր թաղին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“

ԼՐԱԳԻՐ ՔՈՂԱՔԱՎԱԿՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿՆ

1881 թ. լ. Ն

(Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամայով ԱՄՆՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետևելով օրերից):

ՊՐՕԳՐԱՄԱՄԱ. I Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիտօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳՒՆԸ, տարեկան 10 բուր, կես տարվան 6 բ., հինգ ամս. 5 բ., չորս ամս. 4 բ., երեք ամս. 3. բ. երկու ամս. 2 բ. և մի ամս. 1 բուր:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևել հասցեով. Тифлисъ, редакция «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն: Անդրկասպեան երկրից, Նամակ Երևանից, Նամակ Ս. Պետերբուրգից, Նամակ Փոթիից, Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Անգլիական թագուհու գահակաճառը: Անգլիա: Պարսկաստան: Նամակ Պարսկաստանից:—Մշակութիւն: Յայտարարութիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳՐԱՍՊԵԱՆ ԵՐԿՐԻՑ

«Кавказъ» լրագրի մէջ տպուած է հետևեալ պաշտօնական հաղորդութիւնը:
 Երէկ եւ բազմ ունեցայ շնորհաւորել թագաւոր կայսրին կատարեալ յաղթութիւնը, որ մեր զօրքերը գեներալ Սիգբեռլէի անաջնորդութեամբ ունեցան տեկնիցիների վրա հետևեալ հեռագրով:
 «Յունվարի 12-ին ինն ժամ տեղ արևուտ հեղ պատերազմից յետոյ մեր զօրքերը վերջին շտուրմով գէօկ-Տեպէ և Գենգիլ-Տեպէ անուանված թշնամու բոլոր ամրացած դիրքերը: Թշնամու զօրքերը բոլոր գծերի վրա ստիպված են եղել փախչել: Նրանց շարքում էին 15 վերստ տարածութեան վրա: Յաղթութիւնը կատարեալ է: Մենք վերջինք մեծ քանակութեամբ գէներալներ, թնդանօթներ, պատերազմական պաշարներ, բանակը և կուր ժամանակ վերադարձրինք լեռնային երկու թնդանօթներ: Մեր կորուստները դեռ հաշուում են: Թըշնամու կորուստները ահագին են: Զօրքերը անպայման քաջութեամբ էին կուռում: Նորին կայսերական Մեծութիւնը բարեհաճեց բազմապիսի ինձ հետևեալ հեռագրով:
 «Շնորհակալ եմ Աստուածանից Մեզ շնորհած կատարեալ յաղթութեան համար: Գուր հասկանաւ իմ ուրախութիւնը: Երևանի համար, որոնք Մեզ համար այդպիսի նշանաւոր հետևանքով պատկանան Յայտնի իմ խորին շնորհակալութիւնը Մեր բոլոր քաջերին, որոնք կատարեալապէս արդարացին իմ բոլոր յայտերը: Գեներալ-ադիուտանտ»

Սիգբեռլին կատարեալ գեներալի աստիճան և սուրբ Գէորգի 2-դ կարգի շքանշան ընծայեցի: Հրամայիր, որ շուտով ընծաների ներկայացնի գերազանցվածներին:»

Կայսերական այսպիսի նոր ողորմութիւնը դէպի ինձ և ինձ յանձնված զօրքերը յայտնում եմ կովկասեան զօրքերից:

Այս հրամանը տուած է կովկասեան զօրքերին Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան կովկասեան փոխարքայից:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

22 դեկտեմբերի 80

Լրագրների թղթակիցները Երևանի ամեն հասարակական հիմնարկութիւնների մասին խօսելու գրել են քիչ թէ շատ, բայց մեր կուրի մասին լուում են, որ իր բուն կրթողական նշանակութիւնը կորցրած միայն թղթակաղի և շուայութեան կրկես է դարձել չինովելի ու վաճառական, արհեստաւոր և ուսուցիչների համար: Այնտեղ անդամ են քաղաքի բոլոր դասակարգի մարդիկ. դուք կը տեսնէք երկարափափա պարսիկներ, հինապագու խաներ, դուք կը տեսնէք մանր մուսուր պիսարներ, և այլ և այլն: Մեր կըլուրի անդամները այնքան չեն ընտրվում, որքան ընդունվում: Կուրի խեղճ անդամները ամեն կիրակի օր «Երեկոյ» են սահմանել: Մտնում էք ներս. դահլիճներում ճրագները վառ են. մուգիկան հնչում է, կովկած կավայրները դահլիճում պարապ դրօնում են, այն ինչ զա մ ա յ ի հետքն անգամ չէ երևում:... Այս քանի օրերումս մի ուս պարոն կուրի դահլիճում հրապարակական դասախօսութիւն արեց 1874 թ. Հնդկաստան արած իր ճանապարհորդութիւնից: Իւրաքանչիւր ոք, ով գիտէ հայերէն կամ ուսերէն կարդալ, կարող էր գրքերից աւելի շատ տեղեկութիւն ստանալ, քան թէ պարոնի անհամ դասախօսութիւնից:

Խօսելով տեղոյս զարոցների վերաբերութեամբ՝ «Մշակի» № 214-ում կարճ կերպով շատ ուղիղ էր նկատել պ. Նորայրը թեմական զարոցի հոգաբարձուների բռնած վնասակար ընթացքը: Ի հարկէ այդպէս կը լինի և ամեն տեղ, ուր որ մի բան կատարում են ոչ թէ օգտակարութեան համար, այլ ուրիշներին նմանվելու համար. Ի հարկէ խախուտ կը լինի մի զարոցի դրութիւնը, որի ծախքերը եկամուտից աւելի են և որի չնչին դրամագլխի մասն էլ կը բաժանվի իրանց ազգականների ու սիրելիների մէջ, իբրև պարզ անխոնջ աշխատանաց. չը մուսնաք, որ հոգաբար-

ձուներից մինն էլ «Պատկ» մանկավարժական լրագրի խմբագիր պարոն զօկտոր Վ. Պապաջանեանցն է...
 Կոնդի նորարաց Սահականուշեան օրիորդաց զարոցը այս տարի ցած իջաւ քաղաքը և կարծես աւելի կենդանութիւն ստացաւ. սանուհիներ թիւը կրկնապատվել է և ի հարկէ այս ամենի համար պարտական ենք այնտեղի հմուտ և ժրջան վարժուհի օրիորդ Տէր-Մարութեանցին, որ իր բարձր ուսումով և հիանալի ձեռագործութեամբ յայտնի է ողջ Երևանին:

Քաղաքային վարչութեան և խորհրդարանի յարաբերութիւնները խիստ սառն են, և հէնց այդ է պատճառը, որ կրկայի բայելով են յառաջ գնում գործերը, եթէ չստենք խնցղիտնի: Եղանակները առ այժմ անցնում են շատ բարեխառն. քաղաքացիք սպասում են դարմանը, աւելի նրա համար, որ արդէն վճարված է Երևանից 40 վերստ հեռաւորութեամբ գտնված Գրիբուրուպի ջուրը հանեն բերեն քաղաքը, քանի որ ամառ ժամանակը այնքան շատ զգալի է լինում ջրի պակասութիւնը: Այս մեծ գործին խոստացել է օգնել պ. Ղևնդ Ղազարեանը. նա յանձն է առել մինչև 10 կամ գուցէ և 20 հազար բուրով օժանդակել: Մեծ և բարի գործ:

ՎՐՈՅ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Գեկտեմբերի 26-ին, 80

Այս անգամ ես կամենում եմ խօսել մի նիւթի վրա, որ իւրաքանչիւր հայի համար հետաքրքիր է, այն է Մոսկովայի Լազարեան ձեմարանի վերաբերութեամբ:

Արդէն 1815 թ.ից, երբ բացվեց այդ ձեմարանը, Լազարեանները գրեցին ապահովութեան մի դրամազուլէս այդ զարոցի գանձարանը, ժօտ մի միլիոն բուր, որպէս զի այդ փողերի հաշուով միջի այլոց, Լազարեան ընտանիքի հաշուով դաստիարակվին այդտեղ 50 աշակերտներ մինչև ընթացքը լիցեումի մէջ՝ աւարտելով: Որովհետև այն ժամանակ, երբ բացվեց ձեմարանը, ամբողջ հայոց աշխարհը դեռ ես իսաւարի մէջ էր, չունեալով գրեթէ ոչ մի ուսումնարան, այդ պատճառով Լազարեանները մտածեցին իրանց ձեմարանի մէջ դաստիարակել և հոգևորականութեան համար երիտասարդներ, ընդունելով աշակերտներ նոյն իսկ հոգևորական դասակարգից: Այդ նպատակով սահմանեցին տն օրից 50 վականսիայից 30 հատ տալ աշխարհականների որդիներանց, իսկ 20 հոգևորականների զաւակներին: Բայց այսպիսի տարվայ մէջ, որ ժօտ 70 տարի է, Լազարեան ձեմարանում աւարտած հազարաւոր հոգևորականների զաւակներից գրեթէ երկու երեք հատ չը կայ, որոնք իրանց նուրիէին հոգևորականութեամբ: Սրանից պարզ է, որ Լազարեանները սխալվեցին իրանց զիտաւորութեան մէջ. Հոգևորականների որդիք, ուսում աւարտելուց յետոյ, աշխարհական էին դառնում:

Այնուհետև, 1815 թ.ից յետոյ մինչև այժմ բացվել են՝ Ներսիսեան զարոցը, հայաբնակ գաւառական քաղաքներում այլ միջնակարգ ձեմարան, որոնք բոլորն էլ նպատակ ունեն պատրաստել զիտաւորապէս հոգևորականներ: Ուրիշ հարց է, թէ որքան հասնում են այդ զարոցները իրանց նպատակին, բայց քանի որ հարիւր հազարներ են վառնվում մեր հոգևորականների կրթութեան համար մեր բոլոր զարոցներում, այլ ևս ինչ հարկ կայ պահպանել Լազարեան ձեմարանում սկզբնական 20 վականսիա ամբողջութեամբ հոգևորականների զաւակներին կրթելու համար: Միթէ աւելի օգտակար չէր լինի, եթէ 20 տեղը բաժանվեր երկու մասի վրա, որոնցից տասը դարձեալ պահվէր հոգևորականներ պատրաստելու համար, իսկ մնացած 10 վականսիաներ յատկացվէին կովկասեան այն հայերի զա-

ւակներին, որոնք օտարացել են իրանց ազգութեանց և մայրենի լեզուից և խորթանում են նոյնպէս իրանց պապերի հաւատից, զիմուլ օտար դաւանութիւններին: Ես խօսում եմ զիտաւորապէս վրաստանի, կախիթի, Գօրու, Գութայիսի օտարացած հայերի և Նուխու կողմերի ուսիացի հայերի մասին, մի խօսքով կովկասեան այն բուրը հայերի մասին, որոնք հեռագնեւ կորցնում են թէ լեզուով և թէ ազգութեամբ իրանց հայ լինելու մասին ինքնաճանաչութիւնը:

Ի հարկէ աւելի էլ լաւ կը լինէր, եթէ Լազարեան տոճմի այժմեան ներկայացուցիչ իշխան Արամէլիք-Լազարեանը, հայրենասիրական զգացմունքից թեւադրված աւելացնէր առհասարակ վականսիաների թիւը,—այն ժամանակ հարկ չէր լինի հոգևորականների համար եղած վականսիաները կիսով չափ պակասեցնել, վերև յիշած օտարացած հայերի զաւակներին միւս կէտը տալու համար: Այն ժամանակ կարելի էր ընդունել Լազարեան ձեմարանում և թիւրքաց Հայաստանից մանուկներին: Բայց եթէ հար չը կայ վականսիաների թիւը աւելացնել,—գոնէ ցանկալի է որ մտցրած լինի այն փոփոխութիւնը, որ ես վերև յիշեցի:

Յանկալի էր մանաւանդ ընդունել կովկասի այնպիսի տեղերից աշակերտներին, որտեղ հայ տարրը թէև օտարացած է, բայց բազմաթիւ է, ինչպէս օրինակ Նուխու կողմերում, այն ինչ, օրինակ, Գութայիսի կողմերում, կամ կախիթում հայերը քիչ են թւով: Այս խնդրը յարուցանելով ես, ի հարկէ, հարցը չեմ կամենում վճել, այլ թողնում եմ նրա վճելը իշխան Արամէլիք-Լազարեանի խոհեմութեանն ու առողջամտութեանը:

Երէկ լսեցի, որ Ս. Պետերբուրգի և Մոսկովայի հայ եկեղեցիների կալուածական գործը վճովեցաւ մինիստրութիւնից յօգուտ իշխան Արամէլիք-Լազարեանից, այսինքն վճովեցաւ, որ այն, ինչ հաստատել են յանրաբար իրանց ստորագրութեամբ չորս կայսրներ՝ թողնել Ս. Պետերբուրգի և Մոսկովայի եկեղեցական կալուածների տնօրինութիւնը Լազարեանների ժառանգների իրաւունքի տակ, մնայ դարձեալ անփոփոխ:

Ուրեմն այն աղգասէր պարոնները, որոնք իրանց շահասիրական նպատակների համար որոգայթներ էին լարում և ինտրիգաներ անում Լազարեանների դէմ, ամօթով մնացին:

Ս.

ՆԱՄԱԿ ՓՈԹԻՑ

21 դեկտեմբերի 80

Փոթի քաղաքը Մինգրէլիայի քաղաքներից մէկն է, որը գտնվում է Սև ծովի ափին: Վասնապահութեան կողմանէ փոթին յիշվում է ծովային դուռն կովկասից դէպի արտասահման և Ռուսաստան և կենտրոն ապրանքներ դարդալիլու և բարձելու շոգենաւերից: Ուրի երկու փայտաչէն եկեղեցին, այն է ուսուց և հայոց քաղաքի բնակիչներն են՝ վրացիք, մինգրել, գուրլացի, հայ, ուսու և յոյն: Հայերն ու յոյները ամենաքիչ բաժինն են բնակիչներից, բայց վաճառականութեան զիտաւոր մասերը իրանց ձեռքերումն ունեն բռնած: Հայերն ունեն մէկ խոհեմ հայ քահանայ, որի շնորհիւ արդէն փոքրիկ հայոց ուսումնարան են մտադիր բանալու և որի համար արդէն փող է ժողովում և ժողովում է: Բոլոր հայերը, թէ լուսաւորական և թէ կաթոլիկ այնպիսի սէր ունեն միմեանց հետ, որ մի օր չեն կարող անցկացնել մէկն առանց միւսի, որ չը յայտնեն միմեանց իրանց կարծիքները: Բոլոր հայ կաթոլիկները (բացի յոյնսովից, որը չէ իմանում, թէ ինքն ինչ է), յաճախում են լուսաւորական եկեղեցին՝ ունեն եկեղեցական գործերի մէջ այնքան իրաւունք, ինչքան լուսաւորականներն, և եկեղեցու բոլոր հոգաներ հոգ-